ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

№ 5/07. 1/2826
«_____» «_____»2019թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոնի»
նախագահ տիկին Շ.Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի լրումն մեր 2019թ. դեկտեմբերի 25-ի N 5/07.1/2800 գրության, ներկայացնում եմ գրությամբ բարձրացված հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը.

N	Հարց	Պատասխան
1	Ի՞նչ ծրագրի շրջանակում է մշակվել 2019 թ.-ի դեկտեմ-բերի 2-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ e-draft.am -ում, տեղադրված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը	«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի փորձագիտական վերլուծությունն իրականացվել է «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի բնապահպանական կրթության և իրազեկության բարձրացման միջոցով» ԳԷՀ/ՄԱՁԾ ծրագրի շրջանակներում:
2	Տրամադրեք Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքի հղումը, որով կարող ենք գտնել Նախարարության կողմից իրականացվող «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի բնապահպանական կրթության և իրազեկության բարձրացման միջոցով» ԳԷՀ/ՄԱՁԾ ծրագրի մասին ամփոփ տեղեկություն:	Շրջակա միջավայրի նախարարությունում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ տեղի է ունեցել հանրային քննարկում, սակայն նախարարության պաշտոնական կայքում չի տեղադրվել տեխնիկական խնդիրների պատճառով:
3	Որքա՞ն է «Գլոբալ բնապահպանական օգուտների ստեղծում շահագրգիռ կողմերի բնապահպանական կրթության և իրազեկության բարձրացման միջոցով» ԳԷՀ/ՄԱՁԾ ծրագրի բյուջեն:	Ծրագրի բյուջեն կազմում է 780 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ /տեղեկությունը կցվում է/:
4	Նշեք վերոնշյալ ծրագրի	Ծրագիրն իրականացվել է 2015թ-2019 թ.-ն

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
10010608@e-citizen.am | minenv@env.am | www.env.am
հեռ. +374 11 818520 | ֆաքս՝ +37411 818506

	իրականացման ժամկետները:	ընկած ժամկետները :
5	Տրամադրեք տեղեկություն նշյալ ծրագրի շրջանակում նախատեսվող գործողությունների և ակնկալվող արդյունքների վերաբերյալ:	Տեղեկատվությունը կցվում է:
6	Տրամադրեք պատասխան գրության մեջ նշված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի նախագծի փորձագիտական վերլուծության պատճենը և/կամ հղումը:	Փորձագիտական եզրակացությունը բազմաթիվ քննարկումների արդյունք է: «Էկոլոգիական կրթության և դաստիա-րակության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի քննարկման շրջանակներում անցկացված հանրային լսումների ընթացքում մասնագիտական անդրադարձ է կատարվել նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին: Վեր են հանվել օրենքներում առկա բացերն ու թույլ կողմերը: Դրանց արդյունքում մասնակից փորձագետները, ոլորտի մասնագետները համատեղ եկել են այն եզրահանգման, որ կա գործող օրենքը վերանայելու պահանջ:

Կից տրամադրում եմ գրությամբ բարձրացված հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Առդիր՝ 1 նիշք:

Recoverable Signature

X

ՎԱՀԵ ՋԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

Հարգանքով՝
պաշտոնակատար Վ. Ջիլավյան

ՏՀՀԿՎ
Ա.Սուքիասյան
011-818-559